ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/23

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12.02.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/23 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վագա ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 12.02.2018թ. բողոքով հայտնել է հետևյալը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է հետևյալը. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՍՊԸ-ն մասնակիցների հայտի ապահովում հավելված 10-ը ներկայացրել են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա և 18բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը»:

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի հրավերով հայտի ապահովումը նախատեսված է 10-րդ հավելվածով: Հրավերի վերոհիշյալ հավելվածով մասնակցից պահանջվում է ներկայացնել տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ներկայացրել է հավելված 10-ը (հայտի ապահովումը)՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ մեկ էլեկտրոնային ֆայլով, և Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությունն առկա է և տեսանելի Հավելված 10-ի առաջին էջի՝ տուժանքի մասին համաձայնագրի ներքևի ձախ անկյունում (Հավելված 10-ը կցվում է): Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կարծիքով՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը պետք է դրված լիներ նաև տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրի վրա: Եվ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման պահանջագիրն առանձին հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այս կապակցությամբ Ընկերությունը նշել է, որ Մեղրու տարածաշրջանային բժշկական կետրոնը «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1», «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2» և «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրերով մրցույթների շրջանակներում 21.12.2017թ. թիվ 324 գրությամբ (կցվում է) հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է պարզաբանել հետևյալը. «Մրցույթի մասնակից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի հայտի Հավելված 10-ը (հայտի ապահովում) և վճարման պահանջագիրը կազմված է մեկ ֆայլով և դրված է էլեկտրոնային ստորագրություն միայն հավելված 10 ներքևի ձախ անկյունում: Վճարման պահանջագրում չկա ոչ կնիք, ոչ ստորագրություն: Խնդրում եմ գրավոր պարզաբանեք՝ հայտը պետք է մերժվի, թե ոչ»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանը հայտնել է հետևյալը (գրության պատճենը կցվում է). «ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Պետք է նշել, որ նույն խնդրի վերաբերյալ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ իր բազմաթիվ որոշումներով:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում, երբ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա Ընկերության հայտը ենթակա չէր մերժման:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագրի «18բ» կետում դրված չէ Ընկերության կնիքը, որը ըստ գնահատող հանձնաժողովի՝ պարտադիր պետք է դրվի վճարման պահանջագրի «18բ» կետում, կամ չկնքելու դեպքում ընկերության կողմից պետք է կից ներկայացվեր վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճեն: Վճարման պահանջագրում կնիքի բացակայության փաստը դարձել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտի մերժման երկրորդ հիմքը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 07.02.2018թ. խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը պարզաբանել (կցվում է), թե արդյոք էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, սակայն չկնքված վճարման պահանջագիրը կարող է հայտերի մերժման հիմք հանդիսանալ, թե ոչ:

Ի պատասխան 07.02.2018թ. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.02.2017թ.-ին ներկայացրել է հետևյալ պարզաբանումը (կցվում է). «Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերով սահմանված է, որ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու դեպքում կնիքի առկայությունը պարտադիր չէ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ, գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում հայտի ապահովումը, հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա կնիքով հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վերոշարադրվածից պարզ է դառնում, որ եթե «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն արդեն իսկ տուժանքի մասին համաձայնագիրը (հավելված 10) հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի

կողմից վճարման պահանջագրի «18բ» կետը կնիքով չհաստատելու հիմքով հայտը մերժելը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներին, քանզի միմյանց հետ նույնացվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված (համարժեք է կնքված և ստորագրված փաստաթղթին) և ստորագրված, կնքված սկանավորված փաստաթուղթը:

Կարգի 32-րդ կետի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Նույնաբովանդակ կետ է պարունակում նաև հրավերի 8.19-րդ կետը:

Միևնույն ժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նման փաստական հանգամանքների պայմաններում Ընկերությունը գտնում է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագիրը համապատասխանում է «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման, ուստի «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրեսդրության պահանջները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի մասով:

2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընկերության կողմից ներկայացված վճարման պահանջագիրը գնահատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.02.2018թ. թիվ 902 գրությամբ հայտնել է, որ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 24.01.2018թ. իրականացրել է դեղորայքի ձեռքբերման «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ընթացակարգի հրավերը կազմված է համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 238-Ա հրամանով հաստատված՝ հրավերի օրինակելի ձևի: Համաձայն հրավերի 8-րդ բաժնի «Հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման» 8.2

կետի՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը (թիվ 10 հավելված) ներկայացրել է միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի ձևով, որտեղ ընկերությունը հայտարարել է, որ որպես հայտի ապահովում Պատվիրատուին է ներկայացնում տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»: Նշված կանոններով վճարման պահանջագրում «շահառուի և վճարողի ստորագրությունները և վավերացումները» պարտադիր են:

Համաձայն հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա. և 18բ. կետերի, վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի: Սակայն «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից մեկ ֆայլով ներկայացված փաստաթուղթը իր մեջ

ներառում է երկու տարբեր փաստաթղթեր, որից մեկը բանկային կարգադրություն է՝ վճարման պահանջագիր, երկրորդը՝ քաղաքացիաիրավական փաստաթուղթ՝ տուժանքի մասին համաձայնագիր:

Հաշվի առնելով նշված փաստարկները՝ Պատվիրատուի կողմից «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կազմակերպվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 10 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում մեկ ֆայլի տեսքով, որի մեջ զետեղված է եղել տուժանքի մասին համաձայնագիրը և հայտի ապահովման վճարման պահանջագիրը:

3. Ընկերության կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է միայն «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը:

4. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը (հավելված թիվ 10) ներկայացրել է

միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա և 18բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը բացակայում է, և ներկայացված չէ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միչև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի 12.02.2018թ. բողոքը, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.02.2018թ. թիվ 902 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով և նախատեսվել է, որ մասնակիցները հայտը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.19 ենթակետով սահմանվել է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Վագա Ֆարմ» ՍՊԸ -ն, որը հայտի թիվ 10 հավելվածը՝ հայտի ապահովումը ներկայացրել է մեկ ֆայլի տեսքով և էլեկտրոնային ստորագրությունը դրվել է միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա:

Ընկերության կողմից հայտի ապահովման տուժանքի մասին վճարման պահանջագրի վրա ստորագրություն չի դրվել:

Ընթացակարգի հրավերի վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» պարտադիր դաշտը լրացվում է վճարողի կողմից: Ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն

դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

Հրավերի վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.բ կետի համաձայն՝ «վճարողի կնիքը» պարտադիր դաշտը պարտադիր կնքվում է վճարողի կողմից՝ կնիքի առկայության դեպքում և ոչ պարտադիր է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում:

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը (հավելված թիվ 10) ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.ա և 18.բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատախասն պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միչև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

Այսպես, Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթուղթը՝ տեղեկություն է գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Խորհուրդը գտնում է, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը նշված հիմքով ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է կնիքի առկայության հարցին, ապա «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.բ կետի համաձայն՝ վճարման պահանջագրում վճարողի կնիքի առկայությունը պարտադիր չէ այն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին, թե պատվիրատուներին և թե մասնակիցներին ուղղված (այդ թվում՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին ուղղված) մի շարք պարզաբանումներում նույնպես արտահայտել է վերը նշված դիրքորոշումը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման միայն տուժանքի մասին համաձայնագրի ստորագրված լինելը չի կարող դիտարկվել որպես վերջինիս հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու հիմք, քանի որ Ընկերության կողմից հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվել են էլեկտրոնային մեկ ֆայլով, որը հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի մասով:

2. Պարտավորեցնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը գնահատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**